# Տեղեկատու թիվ 05 (մայիս2022թ.)
# Newsletter N 05

---

## Հայ դատի Կենտրոնական Խորհուրդ

## Հայ դատի ամփոփագիր

## Հայ դատի Ամերիկայի հանձնախումբ

# Ամերիկյան 64 կոնգրեսականներ միացել են Ադրբեջանին ռազմական օժանդակությունից զրկելու և Հայաստանին ու Արցախին 150 միլիոն դոլար հումանիտար օժանդակություն տրամադրելու նախագծին

ԱՄՆ Կոնգրեսի ներկայացուցիչների պալատի թվով 46 անդամներ ապրիլի 28-ին նամակով դիմել են հատկացումների հանձնաժողովի նախագահին՝ խնդրելով դադարեցնել Ադրբեջանին տրամադրվող ամերիկյան ռազմական օժանդակությունը և 150 միլիոն դոլար հատկացնել Հայաստանին ու Արցախին,




որպեսզի վերջիններս դիմագրավեն Ադրբեջանի և Թուրքիայի կողմից հարուցված հումանիտար և անվտանգային ճգնաժամերը: Այս երկու ուղղությունները Հայ դատի Ամերիկայի հանձնախմբի հիմնական քաղաքական առաջնահերթություններից են, որոնց իրականացման համար տևական ժամանակահատված աշխատանք է իրականացվում նաև ԱՄՆ-ում գործող այլ ժողովուրդների համայնքային կազմակերպությունների ներգրավմամբ:

Text Link

## “F”: Ambassador Tracy Gets Final Failing ANCA Grade

After more than three years at her diplomatic post, U.S. Ambassador to Armenia, Lynne Tracy, has received a final grade of “F” from the Armenian National Committee of America (ANCA) for her consistently poor performance across a broad array of diplomatic metrics. “As I have said previously, the ANCA wants every U.S. Ambassador to Armenia to be successful,” said ANCA Chairman Raffi Hamparian. “Sadly, Ambassador Tracy has compounded her silence during the 44-day war with reckless disregard for over 90,000 displaced Artsakh Armenians and Azerbaijan’s ongoing encroachment on sovereign Armenian territory. Three years into her tenure as Ambassador to Armenia, Ambassador Tracy has continued to fail on issue after issue – falling far short of the most basic professional expectations of a competent American Ambassador to Armenia.”
The ANCA first gave Ambassador Tracy an “F” rating in December 2020, based upon her poor performance in fifteen different issue areas. In the 18-months since this grade was given, Ambassador Tracy has continued to fail across multiple metrics, among them the lack of meaningful U.S. aid to Artsakh refugees, playing favorites among Armenian political forces, further complicating Armenia’s security and regional relationships, and failing to meaningfully address Azerbaijan’s illegal detention, abuse, and murder of Armenian prisoners of war.

Text Link

## Հայ դատի Ամերիկայի հանձնախումբը Բայդենին կոչ է անում ՀՀ-ում առաջադրել նոր դեսպան

Հայաստանի Հանրապետությունում իր ավելի քան եռամյա դիվանագիտական ծառայությունից հետո դեսպան Լին Թրեյսին կրկին Հայ դատի Ամերիկայի հանձնախմբից ստացել է F (failure/ձախողում) գնահատականը: Առաջին անգամ՝ 2020թ. դեկտեմբերին, Հայ դատի Ամերիկայի հանձնախումբը դիմել էր ԱՄՆ պետդեպարտամենտին՝ խնդրելով վերանայել դեսպանի դիվանագիտական գնահատականը՝ հաշվի առնելով 15 ոլորտներում նրա ձախողումները:
Անցնող գրեթե մեկուկես տարիների ընթացքում նույնպես դեսպան Թրեյսին, ի թիվս այլնի, ձախողել է հայ ժողովրդի համար խիստ կարևորություն ունեցող այնպիսի բնագավառներում, ինչպիսիք են արցախցի տեղահանված անձանց համար ամերիկյան օժանդակության բացակայությունը, հայաստանյան քաղաքական դաշտում ֆավորիտ ուժեր ունենալը, Հայաստանի անվտանգության և տարածաշրջանային հարաբերությունների շարունակական բարդացումը, հայ ռազմագերիների անօրինական կալանավորումներին, բռնություններին ու սպանություններին պատշաճ չանդրադառնալը:
Այս առիթով Հայ դատի Ամերիկայի հանձնախմբի նախագահ Ռաֆֆի Համբարյանը նշել է.

«Ինչպես նախկինում ասել եմ՝ Հայ դատի հանձնախումբը ցանկանում է, որ Հայաստանում ԱՄՆ-ի յուրաքանչյուր դեսպան լինի հաջողակ: Ցավոք, դեսպան Թրեյսին իր լռությանն ավելացրել է 44-օրյա պատերազմի ընթացքում ավելի քան 90,000 տեղահանված արցախահայերի և Հայաստանի ինքնիշխան տարածքում ադրբեջանական շարունակական ոտնձգությունների նկատմամբ անխոհեմ արհամարհանքը: Հայաստանում դեսպանի պաշտոնում իր պաշտոնավարման երեք տարին լրանալուց հետո դեսպան Թրեյսին շարունակում է ձախողել հարց առ հարց՝ շատ հեռու լինելով Հայաստանում ամերիկյան հանձնառու դեսպանից հիմնական մասնագիտական որակներից»:

Text Link

## Արցախը Հայաստանի եւ մեր ազգի պաշտպանությունն է



Մայիսի 9-15-ը Արցախում էին ԱՄՆ Հայ դատի գրասենյակի Կառավարական գործերի ղեկավար Թերեզա Երեմյանը, IT տնօրեն Ներսես Սեմերջյանը և երիտասարդական ծրագրերի ղեկավար Ալեքս Մանուկյանը: Արցախ կատարած այցի մանրամասների, Հայ դատի աշխատանքների մասին «Ապառաժ»-ը զրուցել է Թերեզա Երեմյանի հետ:

Text Link

## ANCA Team Concludes Working Visit to the Artsakh Republic

The Republic of Artsakh's (Nagorno Karabakh) security, socio-economic growth, and youth empowerment were at the center of the Armenian National Committee of America's (ANCA) recent working visit to Artsakh, during which three professional staff consulted closely with government officials, humanitarian groups, and civil society leaders regarding the ANCA's array of pro-Artsakh advocacy initiatives.

ANCA Government Affairs Director Tereza Yerimyan, IT Director Nerses Semerjian, and Programs Director Alex Manoukian were joined by the ANC International's Gevorg Ghukasyan in a week-long fact-finding mission to Artsakh. While there, they worked closely with the ANC of Artsakh, which was launched in September 2021, to focus on protecting the rights of Artsakh's citizens, securing international recognition of the Artsakh Republic, and restoring Artsakh's territorial integrity. The visit took place as the ANCA ramps up advocacy for pro-Artsakh priorities in the Fiscal Year 2023 Foreign Aid Bill and FY2023 National Defense Authorization Act.

Text Link

## Հայ դատի Ամերիկայի հանձնախումբն ամփոփել է մեկշաբաթյա աշխատանքային այցն Արցախ

Հայ դատի Ամերիկայի հանձնախմբի կառավարական հարցերով տնօրեն Թերեզա Յերիմյանը, IT պատասխանատու Ներսես Սեմերջյանը և ծրագրերի պատասխանատու Ալեքս Մանուկյանը, Հայ դատի կենտրոնական գրասենյակի հատուկ ծրագրերի պատասխանատու Գևորգ Ղուկասյանի հետ մայիսի առաջին կեսին, մեկշաբաթյա

փաստահավաք առաքելությամբ, գտնվում էին Արցախում՝ հանդիպումներ ունենալով կառավարական պաշտոնյաների, հումանիտար առաքելությունների, քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հետ։ Այցի հիմնական նպատակն էր փաստահավաք աշխատանքով նախապատրաստվել Ամերիկայի Միացյալ Նահանգներում Արցախի շահերի պաշտպանությանը 2023թ. ֆիսկալ տարվա և 2023թ. Ազգային պաշտպանական արտոնությունների ակտի շրջանակներում։ Այս առումով Հայ դատի Ամերիկայի հանձնախումբը սերտորեն աշխատելու է ՀՅԴ Հայ դատի Արցախի գրասենյակի հետ։

Text Link

## Coalition of American Civil Society Groups Joint Statement on Turkey's Threats of Invading Northeast Syria

Considering the Turkish government's renewed threats of unprovoked military action against northeast Syria, we condemn Turkey's illegal and dangerous posturing as a coalition of concerned Americans. We pledge to pursue sanctions against Turkey should it undertake this unprovoked cross-border attack.
Since 2016, Turkey has launched a sustained series of unprovoked military campaigns into northern Syria in violation of the Geneva Conventions. They have done so under the false pretext of combatting terrorism.
Following the territorial defeat of ISIS, a democratic project has succeeded in northeast Syria. This democratic society was built by the Autonomous Administration of North and East Syria (AANES) and safeguarded by the Syrian Democratic Forces (SDF), America's closest and most reliable ally in the fight against ISIS for nearly a decade.
Under the AANES, northeast Syria is home to Arabs, Kurds, and Christians and values ethno-religious pluralism and gender equality.
Turkey seeks to destroy this budding yet fragile democratic project.
Contrary to Turkish claims, northeast Syria poses no security threat to Turkey. The AANES and SDF consistently serve to prevent the reconstitution of ISIS.

Text Link

# Հայ դատի Եվրոպայի հանձնախումբ

## ՀՀ Ազգային Ժողովի «Հայաստան» դաշինքի պատգամավոր, ՀՅԴ անդամ Արթուր Խաչատրյանն այցելեց Եվրոպական Խորհրդարան

ՀՅԴ Հայ Դատի Եվրոպայի հանձնախմբի նախաձեռնությամբ մայիսի 2-6 կայացավ ՀՀ Ազգային Ժողովի «Հայաստան» դաշինքի պատգամավոր, ՀՅԴ անդամ Արթուր Խաչատրյանի այցը Ստրասբուրգ և Բրյուսել։

Հանդիպումների ընթացքում քննարկվել է Արցախի հիմնախնդիրը, մասնավորապես՝ Ադրբեջանի կողմից շարունակվող հայատյաց քաղաքականությունը, Արցախում չդադարող ռազմական սադրանքները (մասնավորապես՝ Խնապատ-Խրամորթ հատվածում լարվածությունը և Փառուխ գյուղի ու Քարագլուխ բարձունքի մի հատվածի նկատմամբ ադրբեջանական վերահսկողության հաստատումը), հոգեբանական տեռորը և մարդասիրական աղետի ստեղծումը, որի նպատակն Արցախի հայաթափումն է: Արթուր Խաչատրյանը զրուցակիցներին տեղեկացրել է հայ-ադրբեջանական սահմանին տիրող իրավիճակի, ադրբեջանական ուժերի կողմից ՀՀ ինքնիշխան տարածքի նկատմամբ նկրտումների մասին: Առանձնակի ուշադրություն է դարձվել Ադրբեջանում պահվող հայ գերիների հարցին: Զրուցակիցների խնդրանքով պրն. Խաչատրյանը ներկայացրել է ընդդիմության մոտեցումները Արցախի հարցի լուծման վերաբերյալ՝ կարևորելով Արցախի ժողովրդի ազատ ինքնորոշման իրավունքի հարգումը և Ադրբեջանի կազմում Արցախի որևէ կարգավիճակի բացառումը: Պրն. Խաչատրյանը նաև զրուցակիցներին ներկայացրել Հայաստանի ներքաղաքական իրավիճակը և վերջին զարգացումները՝ բարձրաձայնելով ցուցարարների և ցույցերը լուսաբանող լրագրողների նկատմամբ ուժի անհամաչափ կիրառման հարցը:

Text Link

## STATEMENT EAFJD ”Nagorno-Karabakh/Artsakh can never be a part of Azerbaijan”

European Council president Charles Michel will host the Armenian and Azerbaijan leaders for the second time in less than two months, to move towards negotiating a comprehensive “peace treaty” between Armenia and Azerbaijan as the president Charles Michel has stated before.
In March 2022 Azerbaijani forces took control of the Armenian-populated Parukh village in the Askeran region of Nagorno Karabakh as a result of which all the Armenian residents had to flee. Because of the Azerbaijani provocations, the entire Armenian population of the neighboring village of Khramort also had to be evacuated.
In severe winter temperatures the entire native Armenian population of Nagorno-Karabakh/Artsakh was deprived of gas, causing a humanitarian crisis because the damaged pipeline passes through a territory under the control of the Azerbaijani authorities. The native Armenian population in Nagorno-Karabakh/Artsakh is being threatened in their native Armenian language with loudspeakers on the contact line. Moreover, the Armenian cultural and religious heritage in the occupied territories of Nagorno-Karabakh/ Artsakh is being destroyed and erased by Azerbaijan.
Azerbaijan is realizing an ethnic cleansing on the native Armenian population of Nagorno Karabakh/Artsakh and has been pursuing a policy of Armenophobia on state-level for decades. Azerbaijani Armed Forces have illegally invaded Armenian sovereign territory since May 2021 without carrying consequences for violating international law.
Prior to the meeting, the EAFJD and its committees, representing the European citizens of Armenian origin as a part of the European civil society, express their concern and call on the President of the European Council and the EU executive body to consider and raise the following questions and concerns during the meeting:

Text Link

## «Արցախի ժողովրդի ինքնորոշման իրավունքը պետք է անկյունաքարային կետ լինի, հետևաբար Արցախը երբեք չի կարող մաս կազմել Ադրբեջանին»

Եվրոպական Խորհրդի նախագահ Շառլ Միշելը երկու ամսվա մեջ երկրորդ անգամ, մայիսի 22-ին հյուրընկալում է Հայաստանի և Ադրբեջանի ղեկավարներին՝ այսպես կոչված «խաղաղության պայմանագրի» շուրջ բանակցելու համար Նոյեմբերի 9-ի եռակողմ հայտարարությունից հետո Ադրբեջանը բազմաթիվ անգամներ և տարբեր ձևերով խախտել է ձեռք բերված պայմանավորվածությունները.

– Հիշյալ հայտարարության մեջ ասված է, որ կողմերը հրադադարից հետո մնում են իրենց տեղերում, սակայն ադրբեջանական զորքերը Արցախում և Հայաստանում տասնյակ կիլոմետրեր առաջ են եկել:

– Օգտվելով այն հանգամանքից, որ Արցախին սպասարկող գազատարը անցնում է ադրբեջանական հսկողության տակ գտնվող տարածքով, ցրտաշունչ ձմռան պայմաններում ադրբեջանական կողմը խափանեց այն՝ Արցախի ազգաբնակչությանը մատնելով աղետալի պայմանների:

– Սահմանամերձ բնակավայրերում հայ ազգաբնակչության հանդեպ հայերեն լեզվով իրականացվուն է հոգեբանական սպառնալիք- Հայկական մշակույթի կոթողները՝ եկեղեցիներ և հուշարձաններ պղծվում և ոչնչացվում են, փորձ է արվում նրանց հայկական ծագումը ավաղավել:

– Շարունակվում է էթնիկ զտումների տասնամյակների քաղաքականությունը, որի վերջնական նպատակը Արցախն ամբողջությամբ հայաթափելն է:

Text Link

## It is unacceptable for an EU leader to mediate for peace by sacrificing the fundamental rights and needs of the oppressed side. EAFJD

As a pan-European civil society grassroots organization the EAFJD and its committees, representing a significant part of the European citizens of Armenian origin, express their profound discontent with the recent statement of the President of the European Council Charles Michel following the trilateral meeting with the Armenian Prime Minister Nikol Pashinyan and Azerbaijani President Ilham Aliyev on 22 May, 2022.

Mediating for peace is necessary and welcome. Nevertheless, it is essential to ensure that peace is negotiated based on justice and not by cornering the side that has been a victim of vicious aggression of the tandem of two authoritarian regimes, such as Azerbaijan and Turkey which i.a. deployed jihadist fighters against the native Armenian population of Nagorno Karabakh. It is unacceptable for an EU leader to mediate for peace by sacrificing the fundamental rights and needs of the oppressed side.

Text Link

## Անընդունելի է՝ ԵՄ առաջնորդը միջնորդի խաղաղության համար՝ զոհաբերելով ճնշված կողմի իրավունքներն ու կարիքները. ՀՅԴ Հայ դատի Եվրոպայի գրասենյակ

Որպես համաեվրոպական քաղաքացիական հասարակության համայնքային կազմակերպություն՝ ՀՅԴ Հայ դատի Եվրոպայի հանձնախումբը և ԵՄ երկրներում գործող Հայ դատի հանձնախմբերը, ներկայացնելով ԵՄ

հայազգի քաղաքացիների զգալի մասը, իրենց խոր դժգոհությունն են հայտնում Եվրոպական խորհրդի նախագահ Շառլ Միշելի վերջին հայտարարության առնչությամբ, որը հրապարակվել է Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանի և Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևի՝ 2022 թվականի մայիսի 22-ի եռակողմ հանդիպումից հետո։

Խաղաղությանն ուղղված միջնորդությունն անհրաժեշտ է և ողջունելի։ Այնուամենայնիվ, էական է ապահովել, որ խաղաղության բանակցությունները հիմնված լինեն արդարության վրա, այլ ոչ թե անկյուն մղելով երկու ավտորիտար ռեժիմների կողմից, ինչպիսիք են Ադրբեջանը և Թուրքիան, արատավոր ագրեսիայի զոհ դարձած կողմին։ Ի դեպ, Թուրքիան ջիհադիստ վարձկաններ էր տեղափոխել Լեռնային Ղարաբաղի բնիկ հայ բնակչության դեմ։ Անընդունելի է, որ ԵՄ առաջնորդը միջնորդի խաղաղության համար՝ զոհաբերելով ճնշված կողմի իրավունքներն ու կարիքները։

Text Link

## Հայ դատի Կանադայի հանձնախումբ

video link

In the House of Commons, MP Alexandre Boulerice cites the conflict in Artsakh during a debate on the Online News Act, highlighting the importance of having Canadian journalists and reporters abroad to allow Canadians to understand what is happening around the world.

---

video link

Քէպէգ Նահանգի Կրթութեան նախարարութեան կողմէ Ցեղասպանութեանց դասաւանդման ուղեցոյցի որդեգրումը՝ Հայ Դատի գծով կարեւոր իրագործում է։
«Հորիզոն»ի աշխատակից Արիանէ Թասլաքեանը այս մասին հարցազրոյց մը ունեցաւ ուղեցոյցը խմբագրելու աշխատանքներուն մասնակից փրոֆ. Լալէ Մանճիկեանի եւ Գանատայի Հայ Դատի յանձնախումբի անդամ Հրակ Չինչինեանի հետ։

## Հայ դատի Ավստրալիայի հանձնախումբ

# Thousands in Sydney and Melbourne demand Prime Minister and Opposition Leader take final step and recognise Armenian Genocide

Simultaneous marches in Sydney and Melbourne brought the bustling city centres to a halt on 24th April 2022, as over 2,000 Armenian-Australian, Assyrian-Australian and Greek-Australian protesters called upon Australia's Prime Minister Scott Morrison and Leader of the Opposition Anthony Albanese to take what organisers are calling the "final step" and accurately recognise the genocides committed against their ancestors, reported the Armenian National Committee of

Australia (ANC-AU).
Canberra was sent a clear message on the date marking the 107th Anniversary of the Armenian Genocide, as marchers chanted #SpeakUpScomo and #SpeakUpAlbo on the day both leaders stopped short of characterising the 1915 massacres as Genocide.
In his 2022 Armenian Genocide commemorative statement, Prime Minister Morrison expanded on his 2021 statement by adding descriptors such as "massacres" and "expulsion" to the already-used "deportations, dispossession and deaths". He also referred to the first genocide of the 20th century as "one of the greatest crimes in modern history".
Opposition Leader Albanese used similar terminology on his way to calling on "Turkey to come to terms with its own history".

Text Link

## Red, Blue and Orange Illuminated on Iconic Telstra Tower in Canberra to Honour 104th Anniversary of First Independence of the Republic of Armenia

The Armenian National Committee of Australia (ANC-AU) reports that Australia's national capital is marking the 104th Anniversary of the Independence of the First Republic of Armenia with a light tribute of the Armenian tricolours onto Canberra's iconic Telstra Tower.

On 28th May 2022, the 195.2 metre-tall building that looks over the nation's capital will be illuminated red, blue, orange from 5:00pm – 11:00pm (AEST) after arrangements made by the office of the ANC-AU and their local Canberra Branch.
This is the first time an Australian landmark has lit up with the colours of the Armenian flag on the occasion marking a critical date in Armenia's calendar.
Also known as Republic Day or Mayis 28, this annual holiday in the Republic of Armenia marks the anniversary when Armenian men, women and children rose from the ashes just three years after the Armenian Genocide, to defend what would have been a fatal Turkish advance on the nation's dreams of statehood.

Text Link

## STOP Azerbaijan from erasing Armenian cultural heritage

On December 23, 2021, Azerbaijan's Ministry of Foreign Affairs formally requested that Google's parent company, Alphabet Inc., change the "fake" Armenian names in Google maps to Azerbaijani names (**https://www.mfa.gov.az/en/news/no52221**). If Alphabet Inc. were to comply with Azerbaijan's request, the result will be substantial erasure of the Armenian cultural heritage of Artsakh, which is a form of cultural genocide.
On December 7, 2021 the International Court of Justice (ICJ), in the case Armenia v. Azerbaijan, ordered Azerbaijan to "take all necessary measures to prevent and punish acts of vandalism and desecration affecting Armenian cultural heritage, including but not limited to churches and other places of worship, monuments, landmarks, cemeteries and artefacts." **https://www.icj-cij.org/public/files/case-related/180/180-20211207-PRE-01-00-EN.pdf**
Azerbaijan's December 23, 2021 request to Alphabet Inc./Google may violate the ICJ's December 7, 2021

order in that it seeks to change, deny and erase Armenian cultural heritage by removing indigenous Armenian names from the world's digital map. If Alphabet Inc. complies with Azerbaijan's request, it may be assisting Azerbaijan in contravening ICJ orders.
Tell Google to STOP Azerbaijan from erasing Armenian cultural heritage.

Text Link

## Հայ դատի Հունաստանի հանձնախումբ

# Ատրպէյճանական նորագոյն ոտնձգութիւնները - Յունաստանի մէջ

Անցեալ տարուան Նոյեմբերին Թեսաղոնիկէի մէջ հանրակառքերու եւ կանգառներու վրայ ատրպէյճանական գովազդներու երեւումը, որոնք կը ներկայացնէին հայկական Շուշին որպէս ատրպէյճանական քաղաքակրթութեան օրրան։ Այն ժամանակ, հայկական եւ յունական համադրուած հակազդեցութեան շնորհիւ, գովազդները վար առնուեցան եւ այդ արշաւը կանգ առաւ։ Օրին, յայտնած էինք, որ Ատրպէյճանի դեսպանատան մղումով, գովազդներու ետին կանգնած էր «Qala» անունով յոյն-ատրպէյճանական բարեկամութեան միութիւն մը, որուն կեդրոնատեղին կը գտնուի Թեսաղոնիկէի մէջ։
Նոյն «միութիւնը» անգամ մը եւս փորձած է իր ներկայութիւնը զգալի դարձնել, յոյն-ատրպէյճանական բարեկամութեան նուիրուած երեկոյ մը կազմակերպելով՝ գործակցաբար «նախկին Խորհրդային Միութենէն արտագաղթած յոյն-պոնտացիներու միութեան»։
Յունական մամուլին մէջ երեւցան գրութիւններ, որոնք դատապարտեցին այս գործակցութիւնը եւ յատուկ նշում ըրած էին Թեսաղոնիկէի Ամպելոքիփի շրջանի քաղաքապետին մասին, որ անտեսելով պոնտացի ժողովուրդի կրած ողբերգութիւնը թրքական բարբարոսութեան հետեւանքով, քաղաքի մշակութային կեդրոնի սրահը կը տրամադրէր թուրքերու ցեղակից Ատրպէյճանին, որ կը շարունակէ թրքական ցեղասպանական քաղաքականութիւնը Արցախի ու անոր ժողովուրդին վրայ։ Նաեւ, հարց կը դրուէր թէ ինչպէ՞ս պոնտական միութիւն մը, որու ազգային ողբերգութիւնը տակաւին չէ վերականգնած, կը համարձակի ելոյթներ կազմակերպել ատրպէյճանական խմբաւորումի մը հետ։

Text Link

# Գիրքի ներկայացում Թեսաղոնիկէի մէջ

Կիրակի, 8 Մայիս 2022-ի առաւօտեան ժամը 12:00-ին, Թեսաղոնիկէի «Տէր Զաքարեան» սրահէն ներս տեղի ունեցաւ «Արմենոփուլիա» (Հայորդիները) գիրքի շնորհանդէսը։ Ելոյթը կազմակերպուած էր Հ.Յ.Դ. Թեսաղոնիկէի Հայ դատի յանձնախումբին կողմէ։
Գիրքը կը ներկայացնէ Եֆսթաթիոս-Խրիսթոֆորիտիս Սարփողլիսի վկայութիւնը, որ պատկերաւոր եւ մանրամասն ձեւով կը յիշատակէ 600 հայ երեխաներու եղեռնական մահը թուրքերու կողմէ՝ Պոնտոսի Մացուքայի Քունաքա շրջանին մէջ, որ կը գտնուի Տրապիզոնի նահանգը։ Հեղինակը սոյն վկայութիւնը գրեց 1983-ին եւ կը կազմէ իր յուշերու մէկ հատուածը։ Այսպէս, 2019-ին երկրորդական ուսման դաստիարակ Սթաթիս Թաքսիտիս նախաձեռնեց սոյն վկայութեան հրատարակման՝ զայն թարգմանելով 6 լեզուի (հայերէն, անգլերեն, ֆրանսերէն, գերմաներէն, ռուսերէն եւ թրքերէն)։ Կ'արժէ նշել, որ բուն վկայութիւնը գրուած էր պոնտական բառբարով։
Ձեռնարկին սկիզբը Հայ դատի յանձնախումբի անունով խօսք առաւ ընկ. Պետրոս Հալաճեան, որ մատնանշեց մէկ օր առաջ տեղի ունեցած դէպքը Ամպելոքիփի քաղաքապետութեան մէջ,

ուր այսպէս կոչուած «յոյն-ատրպէյճանական բարեկամութեան միութիւն»-ը փորձեց կատարել ելոյթ մը պոնտական ոչ գործոն կազմակերպութեան մը հետ քաղաքապետարանի բարձր հովանաւորութեան տակ։

Text Link

## Հայ դատի Մեծ Բրիտանիայի հանձնախումբ

Baroness Cox hosted an afternoon tea at the House of Lords as a fundraiser for ANC UK. Ambassador Nersesyan was in attendance and Baroness Cox was presented with an Angel of Artsakh award for her lifetime dedication to Artsakh. We would like to give a big thank you to all those that attended and all those that continue to support ANC UK!

Baroness Cox once again questions the British government on their lack of action against Azerbaijan's aggression and war crimes. Swipe to read the full speech.

Question to the Foreign, Commonwealth & Development Office:
Lord Alton
To ask Her Majesty's Government what representations they have made to UNESCO and the government of Azerbaijan to allow a UNESCO mission unimpeded access to document Armenian and Azerbaijan heritage in Nagorno-Karabakh as part of a reconciliation measures.
Answered by Lord Ahmad of Wimbledon - Minister of State (Foreign, Commonwealth and Development Office)
The UK Government continues to raise the importance of the protection of all cultural heritage sites in Nagorno-Karabakh with both the Government of Azerbaijan and the Government of Armenia and is deeply concerned by reports that both parties have destroyed cultural heritage. We continue to press both sides to ensure UNESCO is able to undertake its crucial work in support of historical and cultural heritage. At this stage, we have not made direct representations to UNESCO regarding their efforts to secure access to Nagorno-Karabakh.

## Հայ դատի Կիպրոսի հանձնախումբ

# Հանդիպում Արցախի ԱԺ նախագահի եւ Կիպրոսի իշխող ՏԻՍԻ կուսակցութեան ղեկավարութեան

## հետ

Ուրբաթ՝ Մայիս 27-ին, Արցախի Հանրապետութեան Ազգային Ժողովի նախագահ Արթուր Թովմասեանը եւ Կիպրոս գտնուող իր պատուիրկութիւնը հանդիպում մը ունեցաւ Կիպրոսի իշխող ՏԻՍԻ կուսակցութեան նախագահ Ավերոֆ Նէօֆիտուի եւ Փոխ նախագահ Խարիս Ղէօրկեատիսին հետ կուսակցութեան կեդրոնի մէջ:
Հանդիպման կը մասնակցէին նաեւ Արցախի Ազգային Ժողովի ՀՅԴ խմբակցութեան ղեկավար եւ Արցախի ՀՅԴ Կեդրոնական Կոմիտէի ներկայացուցիչ ընկեր Արթուր Մոսիեանը, Արցախի Հանրապետութեան Արտաքին Գործերու նախարարի տեղակալ Արմինէ Ալեքսանեանը, Ազգային Ժողովի նախագահի խորհրդական Կարէն Վանեանը, ՀՅԴ Կիպրոսի Կոմիտէի ներկայացուցիչ Սիմոն Այնէճեանը եւ Հայ Դատի Յանձնախումբի ատենապետ Յակոբ Գազանճեանը:

Text Link

---

Հայ դատի Կիպրոսի հանձնախմբի հրավերով մայիսի վերջին Կիպրոս է մեկնել Արցախի խորհրդարանական պատվիրակությունը՝ խորհրդարանի նախագահ Արթուր Թովմասյանի նախագահությամբ: Արցախի պատվիրակությունը Կիպրոս է մեկնալ բավական ծավալուն օրակարգով՝ մասնակցել Հայաստանի առաջին Հանրապետության հիմնադրության օրվան նվիրված միջոցառմանը, հանդիպել Կիպրոսի իշխանական ՏԻՍԻ կուսակցության ղեկավարության հետ, հանդիպել Եվրոպական Խորհրդարանի կիպրացի պատգամավոր Կոստա Մավրիտեսի հետ, ունեցել մի շարք այլ հանդիպումներ: Մայիսի 31-ին պատվիրակությունն այցելել է Նարեկ վարժարանների տնօրինությանը:

Text Link

## Հայ դատի Լիբանանի հանձնախումբ

## ՀՅԴ Լիբանանի Հայ Դատի Մարմինը Կոչ Ուղղեց՝ Վերականգնելու Լիբանանի Նահատակաց Տօնին Լիարժէք Իմաստը

ՀՅԴ Լիբանանի Հայ դատի մարմինը 6 մայիսին՝ Լիբանանի Նահատակաց տօնին առիթով լիբանանեան լրատուամիջոցներուն յղեց հետեւեալ հաղորդագրութիւնը.
«Լիբանանի Նահատակաց օրուան նշումը ձեւախեղուած է, եւ իբրեւ Լիբանանի քաղաքացիներ նկատել կու տանք, որ անընդունելի է անտարբեր մնալ ազգային Նահատակաց օրուան նման աղաւաղումի ենթարկուելուն դիմաց: Նահատակաց օրը իր էութենէն պարպելը Լիբանանի ազգային պատմութիւնը վերաշարադրանքի ենթարկելու համազօր արարք է:

«Մայիս 6-ը խորհրդանիշն է ամբողջ ցեղասպանական քաղաքականութեան մը զոհ գացած զանգուածներուն: Այդ թուականը բոլոր համայնքներուն պատկանող մտաւորականներու, լրագրողներու, հանրային կարծիք ստեղծողներու՝ Հայոց ցեղասպանութեան կազմակերպիչներէն, Լեռնալիբանանի սովամահութեան կազմակերպիչ ջարդարար Ճեմալ փաշայի կողմէ կախաղան բարձրացման օրն է, եւ կը խորհրդանշէ ջարդարարական ու զանգուածային սովամահութեան առաջնորդող ամբողջ քաղաքականութիւն մը, այնպէս ինչպէս ապրիլ 24-ը:
«Մայիս 6-ը համալիբանանեան ազգային տօն է, ազգային միասնականութիւնը խորհրդանշող տօն մը եւ այդ միասնականութիւնը ամրապնդող ու սերունդները այդ միասնականութեան ոգիով դաստիարակելու կարեւոր ազդակ մը: Ուստի պետական այրերուն կոչ կ՛ուղղենք՝ վերականգնելու մայիս 6-ի լիարժէք իմաստը՝ նկատի ունենալով անոր ազգային եւ պատմական կարեւորութիւնը»:

Text Link

## Հայ դատի Թեհրանի հանձնախումբ

# ՀՈՒՍԿ-ի նախաձեռնութեամբ՝ Հայոց Ցեղասպանութեան 107-րդ տարելիցին նւիրուած միջոցառում ոչ-հայ լսարանի համար

Լուսանկարը՝ Հատիսի

«ԱԼԻՔ», Կ. Դ. – Հայոց Ցեղասպանութեան եւ հայ ժողովրդի արդար դատի մասին բարձրաձայնելը աշխարհով մէկ եւ ի մասնաւորի Թեհրանում՝ մեր ոչ-հայ հայրենակիցների շրջանակներում, տասնամեակներ եղել է այն առաքելութիւնը, որին լրջօրէն հետամուտ է եղել Հայկական Հարցերի Ուսումնասիրութեան կենտրոն («ՀՈՒՍԿ» հաստատութիւն)՝ Հայ Դատի յանձնախումբը:
Ահաւասիկ, կովիդի պատճառով երկամեայ ընդմիջումից յետոյ, երէկ՝ մայիսի 10-ի երեկոյեան ՀՈՒՍԿ-ի նախաձեռնութեամբ կազմակերպւել էր բանախօսական-գեղարւեստական միջոցառում Հայոց Ցեղասպանութեան 107-րդ տարելիցի առիթով, ոչ-հայ լսարանի համար, Հայ Հասարակական միութեան (Հայ ակումբի) դահլիճում: Միջոցառումը, որը իրենց ներկայութեամբ պատւել էին Իսլ. խորհրդարանի Զրադաշտների պատգամաւորը,ասորիների ներկայացուցիչը, Իսլ. Մշակոյթի եւ առաջնորդութեան նախարարութեան կրօնական փոքրամասնութիւնների յարակից բաժինների եւ քաղաքապետարանի ներկայացուցիչներ,Իրանում ԻԿՕՄ-ի նախագահը, Թ. Հ. Թ. Պատգամաւորական ժողովի, Թեմական խորհրդի ատենապետներ, «Ալիք» հաստատութեան եւ ազգային մարմինների, միութիւնների ու կառոյցների ներկայացուցիչներ, Իրանի քաղաքական ու մտաւորական շրջանակներ եւ մեծ թւով լրագրողներ, մեկնարկեց Իրանի պետական հիմնով:

Text Link

## Հայ դատի Սիրիայի հանձնախումբ

# «ՀԱՅ ԴԱՏՆ ՈՒ ՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹԻՒՆԸ» ԽՈՐԱԳԻՐՈՎ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎ

Կազմակերպութեամբ Սուրիոյ Հայ Դատի Յանձնախումբին, Ուրբաթ, 29 Ապրիլին տեղի ունեցաւ «Հայ Դատն ու Հայ Երիտասարդը» խորագիրով խորհրդաժողովը, որուն իրենց

մասնակցութիւնը բերին հալէպահայ 15 միութիւններ եւ կազմակերպութիւններ։ Խորհրդաժողովը կ'ընդգրկէր հետեւեալ չորս զեկոյցները՝

ա-Հայ Դատ. «Սահմանում, Պահանջատիրութիւն, Գրասենեակներ եւ Անոնց Գործունէութիւնը»։Զեկուցաբեր՝ ՀՅԴ Բիւրոյի անդամ, Բիւրոյի Հայ Դատի եւ Քաղաքական Հարցերու գրասենեակի պատասխանատու Կիրօ Մանոյեան։

բ-«Հայ Դատն ու Միջազգային Օրէնքը»։Զեկուցաբեր՝ իրաւաբան, միջազգային օրէնքի մասնագէտ, Արդարութեան եւ Մարդկային Իրաւանց Հայկական Իրաւական կեդրոնի տնօրէն Խորհուրդի անդամ՝ դոկտ. Գէորգ Յակոբճեան։

գ- «ՁԼՄ-ներուն Դերը Հայ Դատի Աշխատանքներուն Մէջ»։Զեկուցաբեր՝ ՀՅԴ-ի անդամ, Ազգային ժողովի «Հայաստան» խմբակցութեան պատգամաւոր, «Երկիր Մեդիա» պատկերասփիւռային ընկերութեան լրատուական եւ հասարակական-քաղաքական հաղորդումներու նախկին տնօրէն՝ Գեղամ Մանուկեան։

դ-«Հալէպահայ Միութիւններու Դերակատարութիւնը Հայ Դատի Աշխատանքներուն մէջ»։Զեկուցաբեր՝ հրապարակագիր, Հալէպի Հայագիտական Հիմնարկի «Հայ Դատ» նիւթի դասախօս՝ Աւօ Գաթրճեան։

Text Link

## Սուրիոյ Հայ Դատի Կեդրոնական Յանձնախումբի բողոք Նամակ

Սուրիոյ Հայ Դատի կեդրոնական յանձնախումբը իր մտահոգութիւնն ու զայրոյթը կը յայտնէ, Հայրենիքի մէջ կատարուած վերջին իրադարձութիւններու նկատմամբ։ Վերջին շրջանին Հ.Հ. Վարչապետի՝ Նիկոլ Փաշինեանի վարած թրքամէտ ու ազգաթափ քաղաքականութիւնը, պատճառ դարձաւ հայրենաբնակ ժողովուրդի մօտ ստեղծելու պոռթկում եւ անհանդուրժողական մօտեցում, քանզի այդպիսի վերաբերմունք կրնայ պատճառ դառնայ հայրենիքի կործանման եւ հայկական պետականութեան տկարացման, առ այդ՝ հայ ժողովուրդը գիտակցելով ժամանակի օրհասականութեան, ճամբայ իջաւ ցոյցեր կազմակերպելով , պայքարելու եւ փրկելու հայրենիքը թրքականացումէ եւ ձուլումէ։

Սակայն իշխանութիւնները ոստիկանութեան միջոցաւ խաղաղ ցուցարարներուն նկատմամբ կիրարկեցին վայրագ միջոցներ՝ որոնք կ'ոտնակոխէն մարդկանց իրաւունքներուն միջազգային օրէնքը, նաեւ կ'արձանագրէ նահանջ արդարութեան եւ ժողովրդավարութեան ծիրերէն ներս։

Text Link

## Մայիսեան ոգիով



104 տարի առաջ թրքական բարբարոս բանակը իր վերջին յարձակումով ուզեց վերջ տալ հայ ժողովուրդի պատմութեան եւ քարտէսի վրայէն ջնջել Հայաստան եւ հայ անունները։ Ան կը գտնուէր մեր սահմաններուն՝ սկսած գործը շարունակելու, բայց հանդիպեցաւ հայ ժողովուրդի յամառ կամքին՝ Արարատի նման ցցուած իր առջեւ։ Եւ հայը յաղթեց այս բոլորին։ Ան ետ մղելով թշնամին՝ ծունկի բերաւ զայն Սարդարապատի, Բաշ Ապարանի եւ Ղարաքիլիսէի ճակատամարտերուն, ապահովեց իր յաղթանակը, փրկեց իր երկիրը եւ ժողովուրդը։ Հայը կռուեցաւ, հայութիւնը ապրեցաւ, կերտեց քաոսէն հայրենիք եւ կերտեց անցեալի փառքին համազօր պետութիւն, բանակ, մշակոյթ, քաղաքներ եւ շարունակեց

խափանուած իր երթը: Եղեռնէն ետք վերապրելու միակ ընթացքը հայրենիքի կերտումն էր: Բոլոր հայերը հաւատացին այս կարեւոր հրամայականին: Նորակերտ հայրենիքը ունեցաւ իր բանակը, մտաւորականներ, գրողներ, ֆետայիներ: Ունեցաւ իր զինանշանն ու դրօշը: Կրցաւ ժողովրդավարութեան սկզբունքները տարիներով կիրարկել եւ իր սահմաններուն մէջ բարձր պահել այն ոգեղէն ուժը, որ դարձաւ հետագային հայրենիքի թէ՛ առհասարակ աշխարհացրիւ հայութեան ապրելու կիզակէտը:

Text Link

## Հայ դատի Նոր Զելանդիայի հանձնախումբ

# ANC-NZ statement: Turkey has no right to undermine the sovereignty of New Zealand

The Armenian National Committee of New Zealand (ANC-NZ) condemns, in the strongest terms, any and all attempts by the authoritarian regime of Turkey and its foreign agents to restrict the freedoms and rights of New Zealand citizens in their homeland.

On 25th April 2022, Wellington Police prevented Mr. Richard Noble from silently protesting against the New Zealand Government's lack of formal recognition of the extermination of over 1.5 million Armenians during the Armenian Genocide at the Ataturk Memorial on Wellington's South Coast. According to Mr. Noble, despite having conducted similar protests without incident for the past few years, Wellington Police on this occasion stated that they had been authorised by the Wellington City Council to trespass anyone with an Armenian flag on the request of the New Zealand Ministry of Foreign Affairs & Trade and the Turkish Embassy. These actions are shameful and trample on the inalienable rights bestowed upon every citizen under the country's Bill of Rights, which allows New Zealand to thrive as a Western democratic nation built upon the liberal values of truth, justice and freedom of expression.

Text Link

Հայ դատի Կենտրոնական խորհուրդ | +374-10-52-19-66 | www.ancnews.info